ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՀՈՒԼԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N202

ՎՈԼՈԴՅԱ ՓԱՅՏՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Վոլոդյա Փայտյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Վոլոդյա Փայտյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության հողամասում բնակելի տան և առևտրի սրահի վերակառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Վոլոդյա Փայտյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ.հուլիսի 14
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 203

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 25.06.2021թվականի թիվ ՔՏՄ/20.5/74521-21 գրությունը, ինչպես նաև որ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, 1-ին փողոց թիվ 65/1 հասցեում՝ քաղ. Ռոբերտ Քարամյանի կողմից առանց **համապատասխան թույլտվության ինքնակամ շինության կառուցման** հայտնաբերման հիմքով `**որոշում եմ.**

1. Ռոբերտ Քարամյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2021 թվականի Հուլիսի23-ին, ժամը 11.00-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Ռոբերտ Քարամյանին:
4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է համայնքի ղեկավարի օգնական Վարդան Ասատրյանը:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղ Ռոբերտ Քարամյանի իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թվականհուլիսի16

գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 204

«ԱՂԱՎՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ԱՁ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով ինչպես նաև հիմք ընդունելով «Աղավնի Կարապետյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝**որոշում եմ.**

1. «Աղավնի Կարապետյան» ԱՁ-ին տրամադրել հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 2021 թվականի 3-րդ եռամսյակի հուլիսի 16-ից մինչև հոկտեմբերի 01-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ.հուլիսի 16
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 205

ՔԱՂ. ԴԱՎԻԹ ՔՈՍՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Դ. Քոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել Դ. Քոսյանի խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում գտնվող N4 մառանը, N5 ավտոտնակը, N6 գետնափորը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. հուլիսի20
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 206

ԾԱՂԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Ծաղիկ Հարությունյանի դիմումը, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

Համայնքի 2021 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի 10 խմբի 7-1 ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչ Ծաղիկ Հարությունյանին տալ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ. հուլիսի 21
գ.Վերին Պտղնի